ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՐՏԱՀԵՐԹ ԿԱՐԳՈՎ ԴԻՄԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱՆ

30.01.2024 11:13

Հարգելի՛ գործընկերներ,

Քաղաքացիական դատավարության էլեկտրոնային համակարգի գործարկմամբ փաստաբանները պետք է դատավարական փաստաթղթերը ստորագրեն էլեկտրոնային եղանակով:

Նշված հանգամանքով պայմանավորված՝ փաստաբանները էլեկտրոնային ստորագրություն ստանալու համար պետք է ունենան նույնականացման քարտ (ID):

Նկատի ունենալով, որ մեր որոշ գործընկերներ չունեն նույնականացման քարտ, պետական մարմինների հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ փաստաբանների հնարավորություն ընձեռել անձնագրային բաժանմունքում արտահերթ դիմումներ ներկայացնելու՝ նույնականացման քարտ ստանալու համար:

Խնդրում ենք տեղեկացնել նույնականացման քարտ (ID) ստանալու անհրաժեշտության մասին՝ պատասխան նամակ ուղարկելով info@advocates.am էլեկտրոնային հասցեին՝ նշելով Ձեր անունը, ազգանունը և արտոնագրի համարը:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })